Կելիկիոյ թեմերուն։ Պոլիս հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ Տ. Սահակ Սրբազան՝ երկուշաբթի օրը հետևորդներով մեկներ է Ատանայէն դէպի Սիս՝ որ մէկ օրուան ճամբայ է. հետևաբար Ն. Սրբազնութիւնը այժմ կը գտնուի իր Աթոռը։ Պատրիարքարանէ գրուած է Ն. Ամենապատուութեան՝ որ հրաւիրէ իր մօտ նոյն Աթոռին Պոլիս գտնուող միաբանները։

— Վանայ Երամեան վարժարանին ի նպաստ կազմակերպուած յոբելեանին առթիւ կատարուող հանգանակութեան դումարը մինչև ցարդ հասած է 120 ոսկիի։ Նահանգին կուսակալ Վսեմ. Թահիր Փաշա արտօներ է այդ նուիրահաւաքութիւնը որ կը շարունակուի։ Նոյնպէս՝ Թահիր Փաշայի արտօնութեամբ՝ Վանայ Նորաշէնի դպրոցի սրահին մէջ ներկայացուեր է՝ դպրոցական տղոց կողմէ՝ Շէքսբիրի «Վենետիկի Վաճառականը» ծանօթ թատերախաղը և թուրքերէն կատակերգութիւն մը։

ԱԽԱԼՔԱԼԱՔ.

Ախալքալաքի գաւառը մի գործակալութեան շրջան է Վրաստանի և Իմէրեթի թեմում և ենթարկուում է Ախալցխայի յաջորդութեան։ Այս գաւառը Ծալկայի 8 գիւղերի հետ միասին ունի 56 գիւղ։

Գաւառի ազգաբնակութիւնը բաղկանում է հետևեալ տարրերից. հայ՝ ռուս (ուղղադաւան և դուխոբոր)՝ վրացի՝ թուրք՝ քոշայ և հրեայ։ Մեծամասնութիւնը կազմում են Հայերը՝ որոնց մէջ կան նաև՝ թուով շատ քիչ՝ կաթոլիկներ։

Ամբողջ ազգաբնակութեան թիւը, զբաղմունքն ու ուրիշ հանգամանքները որոշել՝ մեր նպատակից դուրս է։ Կամենում ենք միայն «Արարատ»ի ընթերցողներին ներկայացնել սոյն ընդարձակ գաւառում ապրող հայ հօտի հոգևոր և հայ եկեղեցիների բարոյական վիճակը։ Վերջերս՝ մեր խնդրով՝ գործակալութեան կողմից կազմուած մի ցուցակից երևում է՝ որ Ախալքալաքի գաւառում հայերի թիւն հասնում է 54816-ի՝ ծուխերի հաշուով 5697՝ չհաշուած հայ կաթոլիկներին։

Գիւղացի ժողովրդի զբաղմունքն է երկրագործութիւն՝ քա-

ղաքացունը՝ զանազան արհեստները, առևտուրը, շատ քչերին էլ պետական ծառայութիւն։ Գիւղացի ժողովուրդը նեղուում է առհասարակ հողի պակասութիւնից. քաղաքացու կեանքն համեմատաբար աւելի նախանձելի է։ Եւ ինչպէս նիւթականի, նոյնպէս և հոգևոր մխիթարութեան կողմից գիւղացին կարող է նախանձել քաղաքացուն, թէև երկուսն էլ զուրկ են իսկական հոգևոր մխիթարութիւնից։

Հետևեալ աղիւսակը [1] ցոյց է տալիս, թէ ո՞րտեղ ինչքան ծխական է ապրում և իւրաքանչիւր տեղում քանի՞ ծուխ կայ։

		Անհատ.	Ծուխ.
1.	Ախալքալաք (քաղաք)	6000 —	1000
2.	Կաբ-ղաղ (գիւղ) »	2800 —	300
3.	Սաթզա » »	2500 —	220
4.	Վաչեան » »	1850 —	200
5.	Սուլտա » »	1800 —	160
6.	Ցիլեսկէ » »	1800 —	180
7.	Գանձա » »	1400 —	150
7.	Տատէշ » »	1300 —	120
9.	Մեծ Ղանչէլլի » »	1300 —	120
10.	Արակավա » »	1300 —	130
11.	Աղաւրէթ » »	1300 —	130
12.	Ճիկրաշէն » »	1298 —	118
13.	Դիլիֆ » »	1250 —	110
14.	Օրճա » »	1200 —	100
15.	Խանդօ » »	1200 —	115
16.	Գիւմիւրգէ » »	1200 —	140
17.	Ապուլ » »	1150 —	105
18.	Փոկա » »	1100 —	100
19.	Մեծ Գէօնդիւրէ »	1100 —	110
20.	Գոմ կամ Գոման »	1100 —	110
21.	Ճանճղա » »	1010 —	120
22.	Մեծ Արակէլ » »	1000 —	80
23.	Կոբա » »	1000 —	90

1. «Մուրճ»ի այս տարուայ № 1-ում լոյս տեսած մի յօդուածից (յօդուածագիրն է Սալլիումեան) երևում է, որ սոյն գաւառում կայ 57 գիւղ. ներկայ աղիւսակում մոռացուած է Մօլեթ գիւղը, որ յիշում է իւր յօդուածում պ. Սալլիումեանը։

	Անհատ.		Տուխ.
24. Օլաւէրտ » .	900	—	90
25. Մերինխա » .	900	—	100
26. Բարալէթ » .	900	—	108
27. Չանդուրա » .	850	—	90
28. Մաջադիա » .	750	—	70
29. Կուլիկամ » .	750	—	80
30. Մամզարա » .	700	—	60
31. Թօկ Սամսար» .	660	—	60
32. Իխտիլա » .	650	—	60
33. Խորենիա » .	620	—	55
34. Դօջաբէգ » .	620	—	60
35. Զակ » .	610	—	55
36. Փոքր Գէօնդիւրէ .	600	—	50
37. Ականա » .	600	—	55
38. Պալխօ » .	580	—	50
39. Բուզաշէն » .	560	—	48
40. Բզաւէթ » .	550	—	50
41. Լոմատուրս » .	550	—	50
42. Խոսպիա » .	500	—	40
43. Օրօջալար » .	500	—	50
44. Իխտիլա Սամսար .	500	—	50
45. Փոքր Դանչէլլի .	490	—	40
46. Փոքր Արակէլ .	400	—	30
47. Ալաթուման .	400	—	35
48. Դարդօլար .	400	—	38
49. Բուռնաշէթ .	390	—	35
50. Կածօ . .	380	—	32
51. Դավուրմա .	370	—	40
52. Թախչա . .	350	—	30
53. Մրակովալ . .	300	—	30
54. Տրկնա . .	180	—	18
55. Դուլալիս . .	150	—	12
56. Սիրդ . .	100	—	10
57. Մուրջախէթ .	98	—	8
Գումար՝	54816		5697

Սրանց չորսը՝ Զակ, Լոմատուրս, Դարդօլար և Մուրջախէթ՝ եկեղեցի չունին։ Առաջին երկուսը խնդիր են տուել նոր եկեղեցու շէնք կանգնելու, բայց դեռ իրաւունք չի ստացուած։

Եղած եկեղեցիների փոքրութեան կամ խարխուլ լինելու պատճառով նոր եկեղեցի կառուցանելու պէտք ունին հետևեալ գիւղերը. Արագովա, Գիւմիւրդէ, Մերինիա, Մամզարա, Խոսպիա, Ղավուրմա և Ղուլալիս։ Սրանցից Արագովան արդէն ձեռնարկել է գործի։ Առայժմ քանդում են հինը՝ նորը կառուցանելու համար։

Նորոգութեան կարօտ են հետևեալ գիւղերի եկեղեցիները. Սաթղա, Մեծ Ղանչէլի, Ճիկրաշէն, Օրճա և Գոմանս, թէև ուրիշ շատերն էլ պէտք ունին ո՛չ միայն նորոգման այլ և ընդարձակուելու, որովհետև ժողովրդի թիւն օրէցօր աճում է և այժմէն իսկ արդէն շատ տեղերում եկեղեցիները բոլոր ծխականներին իրանց յարկի տակ առնել չեն կարողանում։ Այս վերջին գիւղերից Սաթղան ձեռնարկել է եկեղեցու նորոգութեան, իսկ Օրճացիք շուտով կը ձեռնարկեն։

Մնացած գիւղերն ու քաղաքը եկեղեցու շէնքի կողմից կարելի է ապահով համարել։

Ովքե՞ր են սպասաւորում այս եկեղեցիներում և հովուում իրանց բարոյական պատասխանատուութեան յանձնուած մօտ 55000 հոգի ժողովրդին։ Պատասխանն այնքան էլ մթիթարական չէ, թէև ուրիշ տեղերի հետ համեմատած գուցէ Ալաչքալաքի գաւառին երանի տանք։ Ինչպէս տեսնում ենք, ամբողջ գաւառում կայ 54 եկեղեցի։ Այս եկեղեցիներում սպասաւորող քահանաների թիւն է 56։ Ըստ երևութին իւրաքանչիւր գիւղ ունի մի քահանայ, բայց ո՛չ. գիւղ կայ որ ունի երեք քահանայ, այն ինչ գիւղեր էլ կան, որ բոլորովին զուրկ են քահանայից և յանձնուած ուրիշ գիւղի քահանայի հովուութեան։ Ներկայումս իւրաքանչիւր քահանայի միջին թուով կընկնի մօտ 102 ծուխ, բայց այս կերպ չի բաժանուած։ Ժողովուրդը դըժբաղդաբար իւր իրաւունքը խոհեմութեամբ գործ դնել չկարողանալով քահանայացուների ընտրութեան և քահանայացուին համախօսական տալու գործում՝ բոլորովին անխորհուրդ կերպով քահանաների թիւն աւելացնում է այնտեղ, ուր կարիք չկայ նոր քահանայի, և անտարբեր է գտնուում այնտեղ, ուր քահանան անհրաժեշտ է։ Այստեղ մենք կը դնենք մի աղիւսակ ևս, որ ցոյց կտայ թէ ո՛րտեղ պէտք եղածից աւելի քահանայ կայ և ո՛րտեղ նրանց թիւը պէտք եղածից պակաս է։

		Մուխ.	Քն.
1.	Ախալքալաք (քաղաք)[1]	1000	— 4
2.	Կարզաղ . .	300	— 2
3.	Սաթղա . .	220	— 3
4.	Վաչիան . .	200	— 1
5.	Ծիլիսկէ . .	180	— 2*
6.	Սուլդա . .	160	— 1
7.	Գանձա . .	150	— 2
8.	Գիւմիւրդէ . .	140	— 1
9.	Արագովա . .	130	— 2
10.	Ակաւրէթ . .	130	— 2*
11.	Տատէշ . .	120	— 1
12.	Մեծ Վանչէլի .	120	— 1
13.	Ճանճղա . .	120	— 1
14.	Ճիկրաշէն . .	118	— 1
15.	Խանդօ . .	115	— 1
16.	Ծիլիթ . .	110	— 1
17.	Մեծ Գէօնդիւրէ .	110	— 0**
18.	Գոման . .	110	— 1
19.	Բարալէթ . .	108	— 1
20.	Ապուլ . .	105	— 0*
21.	Օրճա . .	100	— 0*
22.	Մերինիա . .	100	— 1
23.	Փոկա . .	100	— 2
24.	Կորխ . .	90	— 1
25.	Զամդուրա . .	90	— 1
26.	Օլաւէրա . .	90	— 2
27.	Մեծ Արակէլ .	80	— 0*
28.	Կուլիկամ . .	80	— 1
29.	Մաջադիա . .	70	— 2
30.	Մամզարա . .	60	— 1
31.	Թոկ Սամսար .	60	— 1
42.	Իխտիլա . .	60	— 1
33.	Պօջարէգ . .	60	— 1

1. Քաղաքում կայ և մի սարկաւագ.

* Հայը և որդի.

** Հովուութիւնն յանձնուած է ուրիշ գիւղացի քահանաների։

		Ծուխ.	ֆհ.
34.	Խորենիա	55	0*
35.	Զակ	55	0*
36.	Ականա	55	1
37.	Փոքր Գէօնդիւրէ	50	1
38.	Պալխօ	50	1
39.	Բղաւէթ	50	1
40.	Լօմատուրս	50	2
41.	Իխանիէ Սամսար	50	0*
42.	Օրօշլար	50	1
43.	Բուղաշէն	48	1
44.	Փոքր Ղանչէլլի	40	0*
45.	Ղավուրմա	40	0*
46.	Խոսպիա	40	1
47.	Ղադօլար †	48	0*
48.	Ալաթուման	35	0*
49.	Բուռնաշէթ	35	1
50.	Կաճօ	52	1
51.	Թախչա	30	0*
52.	Փոքր Արակէլ	30	1
53.	Մրակովալ	30	1
54.	Տրկնա	18	0*
55.	Ղուլալիս	12	1
56.	Սիրգ	10	0*
57.	Մուրջախէթ †	8	0*

Սոյն աղիւսակից երևում է, որ գիւղերից 15-ը մնայուն քահանայ չունին։ Այս 15-ից երկուսը՝ Սիրգ և Մուրջախէթ, հարկաւ չեն կարող քահանայ պահել՝ ծուխերի սակաւութեան պատճառով. մնացած 13-ը ինչո՞ւ չունենան։ Մինթէ 110 ծուխ ունեցող Մեծ Գէօնդիւրէն, 105 ծուխ ունեցող Աբուլը և ուրիշները չեն կարող մի մի քահանայ ունենալ։ Այն ինչ 80—100 և աւելի ծուխ ունեցող այսպիսի գիւղեր զուրկ են մնայուն քահանայից և մոլորուած հօտի նման սպասում են հաբևան գիւղերի հովիւներին, որ դան հովուեն իրանց՝ տարուայ մի քանի նշանաւոր օրերին կամ ծնունդ և մահ, նշանդրէք և պսակ պատահելիս։—կան գիւղեր էլ, որոնք մէկի տեղ պահում են երկու

* Հովութիւնն յանձնուած է ուրիշ գիւղացի քահանաների։
†. Ոչ սեփական եկեղեցի ունի և ոչ քահանայ։

քահանայ, դժգոհ թողնելով երկուսին էլ։ Օրման բաղկանում է 100 ծուխից և չունի մի մնայուն քահանայ. նրանից ոչ շատ հեռու Մաջադիա գիւղն ունի 70 ծուխ և պահում է երկու քահանայ, որոնք շարունակ կռուի ու երկպառակութեան մէջ են։ Բայց հաւատացած եմ, որ եթէ մի օր սոյն Մաջադիա գիւղում մի նոր քահանայացուի համար խնդիր յարուցուի, ժողովուրդն՝ առանց երկար կշռադատելու, միայն գինու ազդեցութեան ներքոյ կամ զանազան կողմնակի հաշիւներից մղուած՝ նրան էլ կը տայ մի համախոսական, որպէս զի մի օր էլ նրանից դժգոհ մնայ, նրա դէմ գանգատի։

Ժողովուրդն Ախալքալաքի գաւառում բարի է, համեստ և ջերմեռանդ, բայց այսպիսի հարցերում միամիտ է, անտեղեակ և երկչոտ։ Շատ անգամ համախոսականներում երևում են այնպիսի ստորագրութիւններ, որոնց տէրերը խնդրից տեղեկութիւն անգամ չունին. մի ո՛ր և է ազդեցիկ պարոն «վան անգրագիտութեան ստորագրեմ» աւելացնելով առաջին տողերում, յաջորդ տողերը լցնում է իր հարևանների անուններով՝ համոզուած, որ եթէ կեղծիքը բացուի էլ, չեն համարձակուի իր դէմ խօսելու։ Ամէն գիւղում, ուր կայ վաշխառու, շահագործելու համար քահանայի կոչումը՝ այդ կոչման համար առաջ է քաշում միշտ իր երկրպագուներին։ Ի՞նչ օգուտ կը տայ այդ ձևով ընտրուած քահանան, մանաւանդ ի՞նչ կարող է անել մի որ և է հասարակաց գործ բարւոք կառավարութեան մէջ դնելու համար։ Ո՛չ միայն գիւղերում, այլ և քաղաքում ո՛չ թէ քահանան է կառավարում իւր հօտը, այլ հօտը քահանային։ Ամբողջ գաւառի 56 քահանաներից հազիւ կարող ենք մատնացոյց անել երկուսին կամ երեքին, որ չենթարկուին շրջապատող ամբոխի տրամադրութեանը։

Մեսրոպ արիղայ